ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ՝ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

ՇԱՀԲԱԶՅԱՆ Ա. Մ.

Վերջին ժամանակներս հասունանում է այն պատկերացումը, որ մանկավարժական կրթությունը ոչ միայն գիտելիքների, վերլուծական տրամաբանության և գործունեության տարբեր ձևերի յուրացում է, այլև մշակույթի, բարոյական և հոգևոր արժեքների մեջ ներթափանցում, ակամա մասնակցություն դրանց ստեղծմանը և զարգացմանը: Այսօր մանկավարժն ավելին է, քան տեղեկություն հաղորդողը, նա անձի մշակույթի ու հոգևոր դաստիարակության առաջնորդ է: Այդ լուրջ և պատասխանատու առաքելությունը իրականացնելու համար մանկավարժին անհրաժեշտ է տիրապետել ոչ միայն գիտական, ակադեմիական, այլև ստեղծագործ ու պատկերավոր մտածողության ձևերին: Թատերական արվեստի մեծագույն գործիչների խորհուրդներն ու մտքերը, որոնք որոշ առումներով ընդհանուր եզրեր են տեսնում դերասանի և մանկավարժի գործունեության մեջ, հիմքեր են ստեղծել մանկավարժի մասնագիտական հմտությունների, մասնավորապես դերասանական արվեստի ձևավորման ու զարգացման համար: Մանկավարժի դերասանական արվեստը չենք նույնացնում վարպետության հետ: Այն մանկավարժի ներաշխարհի հարստության և գեղեցկության՝ հուզական, ազդեցիկ ու համոզիչ արտահայտվելու ընդունակությունն է, հեռանկարային խնդիրների կանխատեսումն ու դրանց լուծումը, թեմաների կերպարային, պատկերավոր ներկայացումը, երևակայության ու ներհայեցողության, տրամաբանության և գեղագիտական մոտեցման ներդաշնակ համատեղման կարողությունը[1]:

Պ. Բյորնը իրավամբ նկատել է, որ դաստիարակության և մանկավարժական հաղորդակցման մեջ միշտ էլ շեշտադրվել է հուզականությունը, սակայն, եթե նախկինում հետաքրքրում էին բացասական հույզեր, օրինակ, վախը՝ պատժից, անհաջողությունից, ապա այսօր մեծ ուշադրություն է դարձվում դրական հույզերի զարգացման ու ներգործության ռառումնասիրությունների վրա: Մանկավարժական մասնագիտական կրթության կազմակերպման գործընթացում փոխառելով դերասանական վարպետության տարրեր՝ այժմ կարելի է ձևավորել որոշակի տեխնոլոգիաներ, որոնք ապագա մանկավարժին կօգնեն տիրապետելու այնպիսի կարևոր հմտությունների, ինչպիսիք են՝ դերասանական արտահայտչականությունը, մի կողմից՝ տրամաբանականը, մյուս կողմից՝ պատկերավորը ներդաշնակելու և համատեղելու կարողությունը, լսարանի ուշադրությունը գրավելու և ազդելու հնարների տիրապետումը, անձնական ստեղծագործական ինքնաճանաչողությունը, երեխաների հետ փոխհարա-

[1] *Տե՛ս* **Булатова О. С.,** *Педагогический артистизм, М., 2001.*

բերությունների ժամանակ հոգեֆիզիոլոգիական համակարգը կառավարելու կարողությունը, հոետորական արվեստի հնարների կիրառմամբ՝ հանրային ելույթներ ունենալու ունակությունը և այլն[2]:

Այս առումով, մասնագիտական կրթության ընթացքում ապագա ուսուցչի մեջ պետք է ձևավորել դերասանական արվեստի հետևյալ բաղադրատարրերը. մտածողության ճկունություն և պատկերավորություն, ստեղծագործական մտածողություն, հոգեվիճակի ինքնակառավարում, ուշադրությունը գրավելու և պահպանելու կարողություն, գեղարվեստական խոսք և խոսքային արտահայտչականություն, ոչ խոսքային հաղորդակցական միջոցների տեղին և վարպետորեն կիրառում: Այսպիսի բնութագրիչների զարգացման արժեքավոր դասեր են փոխանցել ականավոր թատերագետներ, դերասաններ, ռեժիսորներ ու թատերական գործիչներ, ինչպես՝ Կ. Ստանիսլավսկին, Մ. Չեխովը, Ե. Վախթանգովը, Բ. Շոուն և այլք:

Թատերագեղագիտական մանկավարժությունը մարդու՝ որպես անհատ ձևավորելու ընդհանրական միջոց է: Թատրոնը՝ որպես սոցիալ-մշակութային երևույթ, մասնակիցների մի մասի համար հնարավորություն է ընձեռում անմիջականորեն ստեղծագործելու, այսինքն՝ բեմական խաղին մասնակցելու, մի մասին՝ ղեկավարելու այդ գործընթացը: Սա ի սկզբանե ստեղծում է անհավասարության իրավիճակ, որի առկայության դեպքում երկխոսությունն անհնար է: Սակայն դա իրականում այդպես չէ, քանի որ ռեժիսորը՝ ուսուցիչը, այս պարագայում ավելի շուտ հրահանգչի դեր է կատարում, որը, գործի դնելով այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ըմբռնումը, համբերատարությունը, տրամաբանական մոտեցումը, շփման մեջ է մտնում երեխաների հետ: Այստեղ երկխոսությունը լեզվական շրփման ձև է, որը, կախված ուսուցչի առջև դրված նպատակներից, կարող է ընկալվել և իրականացվել տարբեր կերպ: Թատերական խաղում ծագում են երկխոսության այսպիսի ձևեր՝ արտաքին (ուսուցիչ/ռեժիսոր-ուսանող/դերասան), ներքին (դերասանի եսն ու դերի ես-ը), երևակայության և իրականության, անցյալի ու ներկայի, բնագրի և կյանքի, միջսերնդային (գիտելիքների փոխանցում) և այլն[3]:

Ուսուցիչը երկխոսության այս ձևերի կիրառման միջոցով կարող է ազդել մարդկային հոգու զարգացման վրա՝ նրան կողմնորոշելով դեպի այս կամ այն արժեքները: Օրինակ, գրականության դասերին քննարկվում են բազմաթիվ հրաշալի ստեղծագործություններ, գրվում են հետաքրքիր շարադրություններ, հնչում են թվացյալ ամբողջական պատասխաններ, երեխաների հետ անմիջական շփման ընթացքում ուսուցիչները չեն կարողանում նրանց հետ լեզու գտնել, դատարկ բաների պատճառով սկսում են գոռգոռալ, վիրավորել, կոպտել, ահաբեկել: Ինչո՞ւ չեն օգնում լեզվի զարգացման սովորական դասընթացները, ինչո՞ւ աշակերտը, մայրենի լեզվից գերազանց գնահատական ունենալով, առօրյա կյանքում ի վիճակի չէ օգտվելու այդ դասերին ստացած գիտելիքներից: Չէ՞ որ լեզվի ուսուցման

[2] **Берн Р.,** *Развитие Я концепции, М., 1986.*

[3] **Берн Э.,** *Игры, в которые играют люди, Л., 1992.*

նշանակությունը ոչ միայն թելադրություններն են կամ դասերի ժամանակ տրված պատասխանները, այլև՝ ամենօրյա անմիջական շփումը: Գրականության դասերը պետք են ոչ միայն լեզվի ուսուցման համար, այլև կարող են նպաստել կյանքում անհարժեշտ կարողությունների և որակների ձևավորմանը: Դասերը, որոնք սովորեցնում են կենդանի շփում, պետք է լինեն գործուն և փոփոխվող: Անփոփոխ են նպատակը, պարտադիր թեմաների ընտրությունը և մեթոդական սկզբունքները, իսկ այդ ամենն ապահովող առկա միջոցների շտեմարանը, այսինքն՝ խաղերը, վարժությունները, գրքերը կարող են անընդհատ փոփոխվել և հարստանալ:

Ինչպես ուրիշին լսել և ինչպես անել, որ քեզ լսեն, ինչպես լուծել կոնֆլիկտները կամ վարել բանակցությունները, կռահել խաբեությունները և մեքենայությունները. այս և այլ հմտություններ կարելի է ձևավորել տարբեր թատերական խաղերի և բեմարվեստի վարժությունների միջոցով: Թատերական խաղի նպատակներից է անհատի զարգացմանը, ինքնության ընկալմանն ու ամրապնդմանը, սեփական ընդունակությունների բացահայտմանը, անձնական փորձի հարստացմանը, արժեքների և իմաստի ձեռքբերմանը նպաստելը: Երկխոսությունն ու խաղը դիտվում են որպես ինքնակատարելագործման միջոցներ: Խաղը սոցիալական դաստիարակության գործոն է: Այն լայնորեն կիրառվում է առօրյայում՝ որպես հասարակական փորձի կուտակման միջոց: Թատերական խաղն ավելին է, քան պարզապես իրականության հետ ծանոթացումը: Այն մարդուն տեղափոխում է մի այլ՝ երևակայությունների աշխարհ, որտեղ գրական բնագիրը կյանք է առնում, կերպար է ստանում և դադարում է թղթի վրա պարզապես նշանագրեր լինելուց: Դերասանական խաղի, երկխոսության միջոցով ստեղծված կերպարներն իրական են դառնում: Սա կատարվում է այն հանգամանքի շնորհիվ, որ աշակերտ-դերասանն ապրում է իր դերը: Որպեսզի ճշգրիտ խաղա, նա պետք է այն զգա: Այս միջոցով տեղի է ունենում ներքին երկխոսություն: Իսկ որքան ավելի հետաքրքրիր ու պատկերավոր է դառնում դասը, երբ ուսուցիչն ինքը դրա մատուցման մեջ դնում է իր ստեղծագործական ու պատկերավոր մտածողության հնարավորությունները, որպեսզի արտահայտիչ կարդա յուրաքանչյուր կերպարի խոսքը, ոչ խոսքային հաղորդակցման տեխնիկայով ազդեցիկ ու գրավիչ դարձնի առանձին դրվագներն ու հերոսների շարժումները: Կարծում ենք՝ այդպիսի դասերը բացառիկ են մեր դպրոցներում, և նման ուսուցիչները հաճախ կարող են նույնիսկ ճիշտ չընկալվել: Նրանք հաճախ բախվում են հաղորդակցական և սոցիալական բնույթի լուրջ խնդիրների: Հավանաբար, դերասանական վարպետության տարրերը սկզբում կարող են անսովոր թվալ ուսուցչի համար, որովհետև մենք սովոր ենք հեղինակավոր ուսուցչի կերպարի ընկալմանը, և ազատ, ստեղծագործ մոտեցումը կարող է ցնցում առաջացնել, որովհետև դա դպրոցի համար անսովոր երևույթ է, բայց, անկասկած, դրա կարիքն այսօր անգնահատելի է: Իհարկե, մանկավարժական ավանդական սովորություններով աշխատող ուսուցիչների համար սա կարող է անընդունելի լինել, սակայն, գիտակցելով դասի

արդյունավետության բարձրացման վրա դերասանական արվեստի տարրերի ազդեցության դերը՝ կարելի է ձեռք բերել նման կարողություններ, միայն պետք է սկսել: Անշուշտ, ներքին աններդաշնակության զգացումը, ամոթը, սոցիալական դիրքի միջոցով երեխաներին կառավարելու պատկերացումը խոչընդոտ են մանկավարժական դաստիարակչական գործունեության իրականացմանը: Թատերական գործիչները մանկավարժական տարբեր բարդույթների վերացման և ազատդեմոկրատական մանկավարժական ոճի տիրապետման լավագույն միջոց են համարում խաղը: Խաղի միջոցով թե՛ մանկավարժը, թե՛ երեխան հնարավորություն են ստանում շփման, համագործակցության, որի կարիքն այսօր շատ է զգում հատկապես երեխան: Իսկ թատերական վարպետության դասերն օգնում են ստեղծագործ, ազատ վարքի ձևավորման հարցում, ինչպես նաև ձերբազատվելու ամոթի, ցածր ինքնագնահատականի, բեմական վախի և այլ բարդույթներից: Ա. Մակարենկոն այն հանճարեղ մանկավարժներից էր, որը ստեղծել է գործնական, դաստիարակչական խաղերի մեծ պրակտիկա: Ըստ նրա՝ երեխայի կյանքը խաղ պետք է լինի, իսկ մանկավարժը՝ նրա հետ խաղացող: «Ես, որպես մանկավարժ, պետք է նրանց հետ մի քիչ խաղամ: Եթե ես միայն սովորեցնեմ, հրամայեմ, պահանջեմ, ես կլինեմ օտար ուժ, գուցե՝ օգտակար, բայց ոչ մտերիմ: Ես անպայման պետք է խաղամ, ու այդ պահանջում էի իմ բոլոր գործընկերներից: ...Երբ ես երեխաների հետ եմ, ավելացնում եմ մի քիչ մաժոր, մի քիչ սրամտություն և հումոր, ոչ թե ինչ-որ պատահական ժպիտ, այլ բարյացակամ ժպիտ՝ բավական հագեցած երևակայությամբ: Նույնիսկ եթե ես ունեմ խնդիրներ, կամ հիվանդ եմ, ապա դրանք չպետք է փաթաթեմ երեխաների վզին»[4]: Իսկ այս ամենի համար ուսուցիչը պետք է դրսևորի դերասանական մեծ արվեստ: Անցած դարի խոշորագույն գիտնական Դմիտրի Լիխաչովը գրում է. «Դաստիարակչական նկատառումներով խաղերը շատ կարևոր են: Խաղը՝ կլինի լապտա, վոլեյբոլ, գորելկի, թե մի ուրիշ խաղ, դաստիարակում է միասին լինելու, միասին խաղալու, ընկերոջը և հակառակորդին զգալու կարողություն… Իսկ որքան քիչ են մարդկային շփումները մեզ մոտ: Դրանք շատ կարևոր են՝ անմիջական շփումները, ինչ-որ ենթագիտակցական շփումները, որոնք խաղում, երգչախմբային երգեցողության, երաժշտության մեջ են ձևավորվում: Այս պատճառով էլ մանկավարժական հաստատությունները պետք է ուշադրություն դարձնեն մեր կենցաղի այս կողմին, նրան, որ մեզանում անհետանում են խաղերը: Իսկ մեր ֆիզկուլտուրայի դասերը չդարձնե՞նք խաղային: Սա միանգամից և՛ ֆիզիկական, և՛ բարոյական զարգացում կապահովի, և՛ դասարանը կմիավորի»[5]:

Ըստ մանկավարժ-հոգեբան Շ. Ամոնաշվիլու, «Մենք ջանադրաբար սովորեցնում ենք երեխաներին: Բայց ուսուցումը միայն գիտելիքներ է տալիս և ոչ թե դաստիարակություն: Իսկական դասը

[4] **Макаренко А. Н.,** *Собрание сочинений, т.5, М., 1958, с. 69.*

[5] *Համացանցային նյութեր, Դ. Լիխաչով, Նամակներ երիտասարդ ընթերցողներին (http//dpir.mskn.am/).*

կյանքի էներգիայի աղբյուր է: Այն ոչ թե գիտելիքի համար է, այլ մանկան կյանքի, որ մինչև դպրոց գալը տարերային հոսում էր, իսկ այստեղ մեր օգնությամբ կլինի հատուկ, խելացի, լի ոչ միայն ուսուցմամբ: Դաստիարակությունը աշակերտի հոգու սնունդն է: Պետք է նրա հոգին լցնենք պայծառ, գեղեցիկ կերպարներով: Որովհետև, եթե դա չանենք, երեխաների ներքին աշխարհը ուրիշ բանով կարող է լցվել»[6]: Այսօր անընդհատ խոսում են ուսուցչի մարդասիրության, հումանիստական մանկավարժության մասին: Ո՞րն է դրա տարբերությունն ավանդականից: Ամոնաշվիլին կարծում է, որ չկա ավանդական մանկավարժություն: Կա հավերժական մանկավարժություն, կենցաղային, ժողովրդական: Եվ կա, այսպես կոչված, գիտական: Գիտությունը փորձում է բացահայտել անխախտ օրենքները: Այն գոյություն ունի ժամանակի, տարածության և մատերիայի խիստ շրջանակում: Իսկ մանկավարժությունը գիտե չորրորդ չափումը՝ ուսուցչի անհատականությունը: Ե՛վ կրթության, և՛ դաստիարակության խնդիրները հենց նա է լուծում:

Այսպիսով, կարելի է սերտ կապ տեսնել թատերական մանկավարժության՝ ուսուցչի դերասանական վարպետության և նրա դաստիարակչական գործառույթի արդյունավետության բարձրացման միջև: Դրա համար բուհական կրթության ընթացքում դրական ձեռքբերում կլինի ուսուցչի դերասանական վարպետության զարգացմանը նպաստող դասընթացներ ներառելը:

АРТИСТИЗМ ПЕДАГОГА КАК ФАКТОР ВОСПИТАНИЯ РЕБЕНКА

ШАХБАЗЯН А. М.

Резюме

Развитие педагогики и дисциплин, имеющих отношение к театру, привело к выявлению связи между педагогическим и актерским мастерством. Фактор артистизма в системе педагогического мастерства играет весьма важную роль, являя собой новое направление в педагогической науке, связанное с активизацией внимания к методам обучения и воспитания школьников. Заимствуя элементы актерского мастерства, в сфере организации профессионального образования можно создать определенные технологии, которые призваны будут помочь будущему педагогу в овладении искусством актерской выразительности, развитии способности манипулирования психофизиологическим аппаратом, в приобщении к тайнам ораторского искусства и навыкам публичных выступлений.

[6] *Համացանցային նյութեր, Շալվա Ամոնաշվիլու բաց դասը (http//dpir.mskn.am/).*